# ՉՈՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ. «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ»

**Երևան**
**7-9 սեպտեմբերի, 2016 թ.**

*«Դեմոկրատիան Այսօր» ՀԿ*

Թումանյան 40, բն. 6, Երևան, 0002, Հայաստան
Հեռ:. (+374) 10 53 19 56
Էլ: հասցե: info@democracytoday.am
Կայք: www.democracytoday.am

# ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍԻՆ

*Երկրորդ տարածաշրջանային կոնֆերանսը, որն անցկացվում է «Կովկասը մեր ընդհանուր տունն է» վերտառությամբ, այս անգամ կանդրադառնա Կովկասում կնոջ դերին՝ խաղաղության և պատերազմի գործում: Մասնավորապես, այն կուսումնասիրի քաղաքական, կրոնական, հասարակական ճնշման մեթոդները, որ կիրառվում են կանանց դեմ ռազմական գործողությունների ընթացքում, առաջ և հետո, և կփորձի լուծումներ գտնել այդ ճնշումների դեմ: Կոնֆերանսը ֆորում է նախատեսում՝ ոլորտում կանանց ունեցած կոնկրետ փորձառության փոխանակման և հանուն խաղաղության համագործակցության և կին խաղաղարարներին պաշտպանելու համատեղ հարթակ ստեղծելու համար:*

*Մասնակցել կարող են և՛ հասարակական կազմակերպությունները, և՛ անհատները: Մեկ կազմակերպություն է հրավիրվում Կովկասի յուրաքանչյուր սուբյեկտից: Նախընտրելի են այն կազմակերպություններն ու անհատները, ովքեր իրենց համայնքում տևական փորձ ունեն խաղաղության և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Երկօրյա հանդիպումը ստեղծարար մթնոլորտ է նախատեսում յուրաքանչյուր մասնակցի համար՝ ընտրելու իր ներկայացման մեթոդը՝ պանելային քննարկում, մեթոդոլգիաների մասթեր–կլաս, քննարկում խմբերում:*

*Հետաքրքրվածները կարող են լրացնել դիմումի ձևը (տես ստորև և ww.democracytoday.am կայքում) և ուղարկել կազմակերպիչներին: Զեկուցումներ ներկայացնելու համար խնդրում ենք ներկայացնել 300-500 բառանոց համառոտագիր:*

*Ընտրված մասնակիցների մասնակցության ծախսը, ներառյալ՝ թռիչքները, երկկողմանի տրանսպորտը, հյուրանոցն ու սնունդը, կհոգան կազմակերպիչները: Մյուսները աջակցություն կստանան իրենց ճամփորդությունը ծրագրելու գործում:*

*Հրավիրվում են կանանց կազմակերպություններ Հյուսիսային և Հարավային Կովկասներից՝ Աբխազիա, Ադիգեա, Ադրբեջան, Աջարիա, Դաղստան, Ինգուշեթիա, Լեռնային Ղարաբաղ, Կաբարդինո-Բալկարիա, Կարաչայ-Չերքեզիա, Կրասնոդարի մարզ, Հայաստան, Հարավային Օսեթիա, Հյուսիսային Օսեթիա, Վրաստան, Ստավրոպոլի մարզ:*

*«Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպության մտահղացմամբ (Ադրբեջանի և Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ, որոնք «Հարավային Կովկասի կանայք՝ հանուն տարածաշրջանային խաղաղության և անվտանգության. Խաղաղությունն սկսվում է քո տնից» նախաձեռնության հիմնադիր անդամներ են) Կոնֆերանսի նպատակն է կառուցել գործընկերային հարթակ և ամբողջ Կովկասից կանանց ներգրավել համագործակցության:*

*2013-ին Երևանում անցկացված Առաջին տարածաշրջանային կոնֆերանսի փորձը վկայեց, որ Կովկասի կանայքի հետաքրքրված են կապեր ստեղծել և կիսվել սեփական փորձառությամբ: Նոր գործընկերային հարթակներում կանայք տեղեկանում են միմյանց աշխատանքին, մեթոդներին և նվաճումներին՝ խաղաղության և մարդու իրավունքների պաշտպանության գործում և կապեր են հաստատում՝ այդ ուղղությամբ հետագա աշխատանքների համար:*

# ՆԱԽԱԴՐՅԱԼ

*Պատմությունը ժամանակակից Կովկասում, որը հայտնի է էթնիկ բազմազանությամբ, ավելի քան հիսուն ազգությունների տուն է, նշանակալի է եղել ազգային ինքնության որոնումներով՝ ի դեմս սոցիալական և տնտեսական նոր իրողությունների և քաղաքական լարվածության և հակամարտությունների:*

*Հակամարտություններն ու պատերազմները, որոնցով լի է եղել տարածաշրջանի վերջին երկու տասնամյակների պատմությունը, ստեղծել են բազմաթիվ շփման գծեր և խոչընդոտներ, վերաձևել են Կովկաս կոչվող երբեմնի ամբողջությունը՝ սահմանափակելով պետությունների և ժողովուրդների միջև փոխառնչությունների հնարավորությունը՝ ունենալու տարածաշրջանային զարգացման միասնական տեսլական:*

*Կանայք, ովքեր Կովկասի պատմության մեջ էական դեր են ունեցել խաղաղության և հասարակության կառուցման և հաշտության գործում, գրեթե անտեսանելի են այս գործընթացներում: Քաղաքացիական հասարակության մակարդակում հետաքրքրություն է եղել՝ նորարար մոտեցումներ որդեգրել՝ միասին աշխատելու հանուն ընդհանուր ներդաշնակ տան: Անհրաժեշտ է լայն հայացք ունենալ տարածաշրջանին՝ հույս, ներառական առաջադիմություն և զարգացում ապահովելու համար: Անհրաժեշտ է ավելացնել ուղիղ կապերի, միմյանց ավելի լավ ճանաչելու և հասկանալու հնարավորությունները՝ կայուն խաղաղության հասնելու համար: Կանայք կարևոր դեր են ունեցել և ունեն խաղաղարար և կրթական գործընթացներում. Նրանց այդ դերակատարումը պետք է աջակցություն ունենա զանազան ծրագրերի միջոցով, որոնք կիշխանավորեն, կզորացնեն կանանց:*

*«Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Տարածաշրջանային կոնֆերանսները նպատակ ունեն համատեղ հարթակ ստեղծել Կովկասի կանանց համար, ովքեր ներգրավված են խաղաղության և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Հարթակ, որի շնորհիվ նրանք կփոխանակվեն իրենց փորձով, կտեղեկանան այլոց փորձի մասին նույն ասպարեզում, կզորանան և կզորացնեն միմյանց:*

Վերջնաժամկետ: 30-ը հուլիսի, 2016 թ.
Կոնտակտներ: Աննա Իշխանյան, Գյուլնարա Շահինյան, Լուսինե Թորոսյան
Հասցե: Թումանյան 40, բն. 6, Երևան 0002, Հայաստան
Հեռ: + (374 10) 531956; + (374 77) 41 45 18; +(37477) 87 98 61; + (374 77) 56 55 80
Էլ. փոստ: info@democracytoday.am; anna.ishkhanyan@gmail.com; gulnara.shahinian@gmail.com; lusine.torosian@gmail.com

*«Երիտասարդ կանանց Կովկասի խաղաղության մրցանակը»*
*հնարավոր դարձավ "Kvinna till Kvinna" foundation*
*ֆինանսական աջակցությամբ*

# ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

## «ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱՆԱՅՔ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ»

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

## ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016

*1. Կազմակերպության/անհատի անունը.

*2. Կոնտակտներ.

*Հասցեն.

*Հեռախոսը.

* Ֆաքսը.

*Էլ-փոստը.

*3. Կազմակերպության/գործունեության նպատակները.

*4. Վերջին հինգ տարում կատարած ծրագրերը/գործունեությունը.

*5. Մասնակցության նպատակը.

*6. Պրեզենտացիայի մեթոդը.

*7. Պահանջված սարքավորումները.

*8. Մասնակցի անունը և պաշտոնը/դիրքը.